



## Տարվա լավագույն ֆուտբոլիստի քվեարկության կարգ

### 1. «Տարվա լավագույն ֆուտբոլիստ» անվանակարգում քվեարկությանը կարող են մասնակցել

1. ՁԼՄ-ների ներկայացուցիչները (բացառությամբ ֆուտբոլային որևէ ակումբում աշխատող լրագրողների)
2. VBET Հայաստանի Պրեմիեր Լիգայի 2020-2021թթ. մրցաշրջանի մասնակից թիմերի գործող գլխավոր մարզիչները
3. VBET Հայաստանի Պրեմիեր Լիգայի 2020-2021թթ. մրցաշրջանի մասնակից թիմերի գործող ավագները

### 2. «Տարվա լավագույն ֆուտբոլիստ» անվանակարգում ցուցակի մեջ ընդգրկվում են՝

Օրացուցային տարվա ընթացքում Հայաստանի ազգային և տարբեր տարիքային հավաքականներում, ինչպես նաև իրենց ակումբներում, այդ թվում՝ արտերկրում, առավել աչքի ընկած ֆուտբոլիստները, որոնց թեկնածությունն առաջադրվում է ՀՖՖ-ի կողմից:

### 3. Քվեարկողներին առաջարկվում է վերը նշված սկզբունքով կազմված ֆուտբոլիստների ցուցակը, որոնցից պետք է ընտրել լավագույն երեքին:

Քվեարկությունը պետք է ուղարկել [thebest@ffa.am](mailto:thebest@ffa.am) էլիասցեին՝ նշելով քվեարկության տարբերակը, անուն-ազգանուն, լրատվամիջոցի անուն, կցելով լրագրողական բեյջը և լուսանկարը:

### 4. Միավորների հաշվառումը կատարվում է ՀՖՖ Հասարակայնության հետ կապերի և լրատվության բաժնի կողմից՝ հետևյալ կարգով. 1-ին տեղ՝ 5 միավոր, 2-րդ տեղ՝ 3 միավոր, 3-րդ տեղ՝ 1 միավոր:

### 5. «Տարվա լավագույն ֆուտբոլիստ» անվանակարգում քվեարկության արդյունքում առաջին տեղ զբաղեցրած ֆուտբոլիստը պարգևատրվում է «ոսկե» գնդակ մրցանակով և 4 միլիոն դրամով, երկրորդ տեղ զբաղեցրած ֆուտբոլիստը՝ «արծաթե» գնդակ մրցանակով և 3 միլիոն դրամով, երրորդ տեղ զբաղեցրած ֆուտբոլիստը՝ «բրոնզե» գնդակ մրցանակով և 2 միլիոն դրամով: